ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023թ. թիվ 607-Ա

Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՄՐԱԿԻՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 579-Ա որոշումը և հաշվի առնելով Ն.Մուրադյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նարինե Հրաչիկի Մուրադյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Ն.Մուրադյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 30-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

27/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր